



# ԿԱՆԳՆԵՔ.ՄՏԱԾԵՔ.ՄԻԱՅԵՔ.™

Չրույց երեխաների հետ առցանց լինելու մասին



# ՑԱՆԿ



Էջ 4 ՆԱԽԱԲԱՆ



Էջ 6 ԶՐՈՒՑՅԵՔ ԶԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ



Էջ 9 ԽՈՐՀՈՒՐԴ ՏԱՐԲԵՐ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ



Էջ 14 ԱՌՑԱՆՑ ՇՓՈՒՄՆԵՐ



Էջ 22 ԱՌՑԱՆՑ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՈՑՈՒՆ



էջ 28

ՇԱՐԺԱԿԱՆ ՀԵՌԱԽՈՍՆԵՐ. ՀՐՆԹԱՅՍ  
ՇՓՈՒՄՆԵՐ և ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
Սեքստինգ, Տեքստերի ուղարկում և  
ստացում



էջ 34

ՊԱՇՏՊԱՆԵՔ ԶԵՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԸ  
P2P Ֆայլերի փոխանակման ժամանակ



էջ 38

ԾՆՈՂԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ



էջ 42

ՊԱՇՏՊԱՆԵՔ ՎԱՂ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԻՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՐԵԽԱՅԻ  
ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ



էջ 46

ԲԱՌԱՐԱՆ



էջ 52

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ



էջ 54

ԿԱՆԳՆԵ՛Ք. ՄՏԱԾԵ՛Ք. ՄԻԱՅԵ՛Ք.



# ՆԱԽԱԲԱՆ

**Համացանցն առաջարկում է  
բազում հնարավորություններ:**

**Ամեն տարիքի մարդիք  
կարողանում են**

- ▶ Տեսանյութեր տեղադրել շարժական սարքերից
- ▶ Ձևավորել անձնական էջեր Համացանցում
- ▶ Շարժական սարքերից ուղարկել տեքստային հաղորդագրություններ
- ▶ Ստեղծել երկրորդ ինքնություն առցանց ավատարների տեսքով
- ▶ Կապ հաստատել առցանց այն ընկերների հետ, ում կանոնավոր կերպով չեն տեսնում
- ▶ Լուսանկարներ ուղարկել ընկերներին
- ▶ Հեռարձակել իրենց արածը հարյուրավոր մարդկանց





Շփման և հաղորդակցության այս եղանակները կարող են մեծ բավականություն պատճառել, սակայն դրանք նաև կապված են որոշակի ռիսկերի հետ

## Ոչ պատշաճ վարքագիծ

Համացանցի աշխարհը կարող է անանուն երևալ: Երեխաները երբեմն մոռանում են, որ պատասխանատու են իրենց գործողությունների համար:

## Ոչ պատշաճ շփումներ

Որոշ մարդիկ ունեն վատ մտադրություններ, այդ թվում՝ կիբեռռետապնդողները, կողոպտիչները, հաքերները և խաբեբաները:

## Ոչ պատշաճ նյութեր

Դուք մտահոգված եք այն բանով, որ երեխաները Համացանցում կարող են գտնել ոչ պատշաճ նյութեր, ինչպիսիք են պոռնոգրաֆիան, բռնությունը կամ ատելության խոսք պարունակող նյութերը:

Դուք կարող եք կրճատել այդ ռիսկերը՝ երեխաների հետ խոսելով Համացանցում և Համացանցից դուրս հաղորդակցման մասին և խրախուսելով նրանց դրսևորել այնպիսի վարքագիծ, որով կկարողանան հպարտանալ:

Այս ուղեցույցը ներառում է այն բոլոր հարցերը, որոնք անհրաժեշտ է իմանալ, մասնավորապես, որտեղից ստանալ լրացուցիչ տեղեկատվություն և թե ինչ պետք է քննարկել երեխաների հետ իրենց կյանքն առցանց առավել արդյունավետորեն կազմակերպելու համար:



# Ջրուցե՛ք ք ձեր երեխաների հետ



## Վստահ չեք՝ ինչի՞ց սկսել

### Մտածեք հետևյալի մասին.

#### Սկսեք վաղ

Ի վերջո, անգամ նոր-նոր քայլել սկսող երեխաներն են տեսնում, որ իրենց ծնողներն օգտվում են տարբեր տեսակի սարքերից: Հենց որ ձեր երեխան սկսում է օգտվել համակարգչից, բջջային հեռախոսից կամ որևէ այլ շարժական սարքից, ճիշտ կլինի գրուցել նրա հետ առցանց վարքագծի, ապահովության և անվտանգության մասին: Որպես ծնող՝ դուք հնարավորություն ունեք խոսելու երեխայի հետ այն ամենի մասին, ինչ կարևոր է, նախքան մյուսները կխոսեն այդ մասին:

#### Ձևավորեք ազնիվ և բաց միջավայր

Երեխաներն ակնկալում են, որ ծնողները կօգնեն և ուղղություն կտան իրենց: Աջակցեք նրանց և դրական տրամադրվեք: Լսելը և նրանց զգացածը հաշվի առնելը կնպաստի գրույցի շարունակականությանը: Գուցե դուք չունենաք բոլոր հարցերի պատասխանները, և այդ մասին անկեղծորեն ասելը կարող է մեծ նշանակություն ունենալ:

Ձեր երեխաներին ցանցում պաշտպանելու լավագույն միջոցը. Խոսեք նրանց հետ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ երբ երեխաները կարևոր տեղեկությունների կարիք ունեն, նրանք ապավինում են իրենց ծնողներին:

Նախաձեռնեք զրույցներ

Նույնիսկ եթե ձեր երեխաները հանգիստ են ձեզ դիմելու հարցում, մի սպասեք, որ նրանք սկսեն խոսակցո թյո նր: Օգտագործեք ամենօրյա հնարավորո թյո նները երեխաների հետ խոսելո առցանց լինելո մասին: Օրինակ՝ ցանցում անչափահասի ներկայո թյան կամ բջջային հեռախոս գործածոլ պատանո մասին հեռո ստատեսային հաղոորոլ մը կարոլ է խթանել քննարկումն այն մասին, թե ինչ անել և ինչ չանել նման իրավիճակներում: Նոր պատմությունները համացանցային խարդախոլոյան կամ կիրեռհետապնդումների մասին, օրինակ, նույնպես կարոլ են օգնել սկսել քննարկում երեխաների հետ ձեր փորձի և սպասելիքների մասին:





## Փոխանցեք ձեր արժեքները

Եղեք անկեղծ ձեր արժեքների և դրանց՝ առցանց կիրառելիության մասին: Ձեր արժեքները փոխանցելը որոշակիորեն կօգնի ձեր երեխաներին ավելի խելացի և մտածված որոշումներ կայացնել խնդրահարույց իրավիճակներում:

## Եղեք համբերատար

Դիմադրեք երեխաների հետ խոսակցություններն արագ ավարտելու ցանկո թյանը: Երեխաներից շատերը կարիք ունեն, որ տեղեկությունները կրկնվեն փոքր չափաբաժիններով, որպեսզի դրանք կլանվեն: Եթե շարունակեք զրուցել երեխաների հետ ձեր համբերությունը և հետևողականությունը կփոխհատուցվի: Չանք մի խնայեք բաց պահելու հաղորդակցության ուղիները, նույնիսկ այն դեպքում, երբ պարզում եք, որ ձեր երեխան ոչ պատշաճ բան է արել չամացանցում:



- ▶ Փոքր երեխաներ
- ▶ Դեռահասներ
- ▶ Պատանեկության տարիքի երեխաներ



### Փոքր երեխաներ

Երբ շատ փոքր երեխաները սկսում են օգտվել համակարգչից, նրանք պետք է լինեն ծնողի կամ դաստիարակի ուշադիր հսկողության ներքո: Ծնողները թերևս ցանկանան ընտրել այն կայքերը, որ երեխաները կայցելեն վաղ հասակում, այլ ոչ՝ թողնեն դրանք երեխաների ընտրո թյանը: Եթե փոքր երեխաներն առցանց հսկողո թյան չենթարկվեն՝ նրանք կարող են պատահաբար բացել կայքեր, որոնք կվախեցնեն կամ կշփոթեցնեն նրանց:

Երբ դուք կհամոզվեք, որ փոքր երեխաներն արդեն պատրաստ են ինքնուրույն հետազոտելու Համացանցը, կարևոր է կապի մեջ մնալ նրանց հետ այն ժամանակ, երբ նրանք գնում են մի կայքից մյուսը: Գուցե դուք ցանկանաք սահմանափակել նրանց՝ թույլ տալով մտնել միայն այնպիսի կայքեր, որոնք դուք այցելել եք և պատշաճ եք համարում առնվազն ուսուցանման կամ ժամանցի տեսանկյունից:



## Դեռահասները

Դեռահաս տարիքում՝ 8-12 տարեկանում, երեխաները սկսում են ավելի շատ բան հետազոտել ինքնուրույն, սակայն դա չի նշանակում, որ դուք չպետք է լինեք նրանց կողքին: Կարևոր է լինել նրանց հետ կամ առնվազն մոտ, երբ նրանք գտնվում են Համացանցում: Այս տարիքային խմբի համար համակարգիչը տեղադրեք ձեզ կամ այլ մեծահասակին մոտ վայրում: Այդ կերպ նրանք կարող են լինել «անկախ», սակայն ոչ միայնակ:



Շատ դեռահասներ հեշտությամբ են առցանց տեղեկություններ գտնում... սակայն նրանք մեծահասակի ուղղորդման կարիքն ունեն՝ հասկանալու, թե որ աղբյուրներն են արժանահավատ:



Վաղ դեռահասության տարիքում գտնվող երեխաների համար **ծնողական հսկողության միջոցները**, այդ թվում՝ գուման և ստո գման գործիքները, կարող են արդյո՞ նավետ լինել: Այդուհանդերձ, միջնակարգ դպրոց հաճախող շատ երեխաներ ունեն տեխնիկական ունակություններ՝ ինքնուրույն կողմնորոշվելու համար: Եթե երեխաները դեռ չեն օգտվում համակարգչից դպրոցական հանձնարարությունների կատարման համար, ապա ճիշտ ժամանակն է, որ նրանք սկսեն օգտվել դրանից: Նաև երբ հայտնաբերեն ռեսուրսներ սիրած զբաղմունքների և այլ հետաքրքրությունների համար: Շատ դեռահասներ ունակ են արագ տեղեկություններ գտնել ցանցում: Սա հաճախ օգտակար է ընտանիքի մյուս անդամների համար, սակայն նրանք մեծերի խորհրդատվության կարիքն ունեն հասկանալու համար, թե որ աղբյուրներն են արժանահավատ:

Երբ մտածում եք, թե ձեր դեռահաս երեխաներն ինչ են տեսնում և անում Համացանցում, մտածեք, թե որքան ժամանակ են նրանք ծախսում այնտեղ: Մտածեք սահմանափակումներ կիրառել այն հարցում, թե որքան հաճախ նրանք կարող են լինել Համացանցում և թե որքան պետք է լինի այդ այցելությունների տևողությունը:

## Պատանեկության տարիքում գտնվող երեխաները

Վաղ պատանեկության տարիքում գտնվող երեխաները հակված են վերցնելու իրենց ծնողների արժեքները: Երբ հասնում են պատանեկության տարիքին, արդեն սկսում են ձևավորել իրենց սեփական արժեքները և ընդօրինակել իրենց ընկերներին: Միննույն ժամանակ ուշ պատանեկության տարիքում գտնվողները հասունանում են ֆիզիկապես, էմոցիոնալ և մտավոր առումներով, և նրանից շատերը ցանկանում են առավել անկախանալ իրենց ծնողներից:




Պատանեկության տարիքի երեխաների համար Համացանցն ավելի մատչելի է բջջային հեռախոսների, **շարժական սարքերի** կամ ընկերների համակարգիչների միջոցով: Բացի այդ նրանք ավելի շատ ժամանակ են հատկացնում իրենք իրենց: Հետևաբար, իրատեսական չէ փորձել և միշտ լինել ձեր հետ նույն սենյակում, երբ նրանք Համացանցում են: Նրանք պետք է իմանան, որ դուք և ընտանիքի այլ անդամները կարող եք մտնել և դուրս գալ ցանկացած ժամանակ և հարցնել նրանց, թե ինչով են զբաղված առցանց:

Կարևոր է պատանիների հետ խոսել վստահո թյան մասին: Տեխնոլոգիաների հարցում անզամ շատ ունակ երեխաները պետք է հասկանան, որ Համացանցում իրենց տեսածից ամեն ինչը չէ, որ ճիշտ է: Համացանցում մարդիկ կարող են չլինել այն, ինչ ներկայանում են: Պատանիները պետք է հասկանան, որ իրենց տարածած տեղեկություններն ու պատկերները կարող են տեսանելի լինել լայն շրջանակների համար, և երբ մի բան տեղադրվում է Համացանցում, այլևս «համարյա անհնար է» այն «հետ վերցնել»:

Քանի որ դեմքի արտահայտությունները, ժեստերն ու այլ տեսողական հնարքներն առցանց անտեսանելի են, պատանիները կարող են Համացանցում ասել և անել բաներ, որ Համացանցից դուրս չէին ասի ու անի: Հիշեցրեք նրանք, որ առցանց անունների, անձնական էջերի և ավատարների հետևում իրական զգացմունքներով իրական մարդիկ են:

Ձեր պատանու հետ զրուցելիս՝ սահմանեք ողջամիտ ակնկալիքներ: Կանխատեսեք, թե ինչպես կարձագանքեք, երբ պարզեք, որ առցանց նա արել է մի բան, որ ձեզ դուր չի գալիս: Եթե ձեր երեխան ձեզ գաղտնի պատմում է մի ինչ-որ վախենալու կամ ոչ պատշաճ բանի մասին, որին առնչվել է Համացանցում, փորձեք միասին աշխատել նման բան հետագայում թույլ չտալու ուղղությամբ: Քանի որ պատանին արդեն մոտ է չափահաս դառնալուն, նա պետք է սովորի, թե ինչպես վարվել և օգտագործել առողջ դատողությունը Համացանցն անվտանգ, ապահով և ձեր ընտանիքի էթիկային համահունչ օգտագործելու համար:

Տեխնոլոգիաների հարցո՞ւմ անգամ շատ ո՞նակ երեխաները պետք է հասկանան, որ Համացանցում իրենց տեսածից ամեն ինչը չէ, որ ճիշտ է: Համացանցում մարդիկ կարող են չլինել այն, ինչ ներկայանում են: Իրենց տարածած տեղեկություններն ու պատկերները կարող են տեսանելի լինել լայն շրջանակների համար, և երբ մի բան տեղադրվում է Համացանցում, այլևս «համարյա անհնար է» այն «հետ վերցնել»:



Մոցիալական ցանցերի կայքերը, գրուցասենյակները, վիրտուալ աշխարհները, բլոգերը միջոցներ են, որոնցով դեռահասներն ու պատանիները մտնում են առցանց շփման մեջ: Երեխաները տարածում են նկարներ և տեսանյութեր, փոխանակվում են մտքերով և ծրագրերով ընկերների և այն անձանց հետ, ովքեր կիսում են նրանց հետաքրքրություններն Համացանցում, և ի վերջո շփվում են ողջ աշխարհի հետ:

Առցանց շփումներն օգնում են երեխաներին կապ հաստատել իրենց ընկերների, անգամ ընտանիքի անդամների հետ, սակայն կարևոր է օգնել երեխաներին սովորել, թե ինչպես անվտանգ ճամփորդել այդ տարածքում: Առցանց շփումների սխալներից են չափից ավելի տեղեկություններ, նկարներ, տեսանյութեր կամ բառեր տարածելը, ինչը կարող է վնասել ինչ-որ մեկի հեղինակությունը կամ ցավ պատճառել: Իրական կյանքում կիրառվող դատողություններն ու ողջամտությունը կարող են օգնել նվազագույնի հասցնել այդ թերությունները:




## Ի՞նչ կարող եք անել

Հիշեցրեք ձեր երեխաներին, որ իրենց առցանց գործողությունները կարող են արձագանքներ ունենալ:

Այն բառերը, որ նրանք գրո՞ւմ են կամ այն պատկերները, որ նրանք տեղադրում են Համացանցում, հետևանքներ են ունենում Համացանցից դուրս:

Բացատրեք ձեր երեխաներին, թե ինչու է ճիշտ տեղադրել միայն այնպիսի տեղեկություններ, որոնք իրենք անհարմար չէին զգա, որ ուրիշները տեսնեն:

Ձեր երեխայի անձնական էջը կարող է տեսանելի լինել ավելի լայն շրջանակների համար, քան որին դուք սովոր եք, նույնիսկ այն դեպքում, երբ ձեր էջի գաղտնիության կարգավորումները արված են: Խրախուսեք ձեր երեխաներին մտածել, թե ինչ լեզվով են խոսում Համացանցում և ինչ նկարներ կամ տեսանյութեր են տեղադրում: Խոսեք երեխաների հետ այլոց կողմից տեղադրված լուսանկարները փոփոխելու հետևանքների մասին: Գործատուները, ուսումնական հաստատությունների ընդունելության գրասենյակները, մարզիչները, ուսուցիչները և ոստիկանությունը կարող են ուսումնասիրել ձեր երեխայի կողմից տեղադրված նյութերը:



Հիշեցրեք ձեր երեխաներին, որ եթե նրանք  
ինչ-որ բան տեղադրեն Համացանցում,  
նրանք այլևս չեն կարող այն հետ վերցնել:

Նույնիսկ եթե նրանք հեռացնեն այդ  
տեղեկությունները կայքից, նրանք շատ քիչ  
հսկողություն կունենան այն հին տարբերակների  
նկատմամբ, որոնք կլինեն այլ անձանց  
համակարգիչներում և կշրջանառվեն ցանցում:


Օգտագործեք գաղտնիության  
կարգավորումները՝ սահմանափակելու ձեր  
երեխայի անձնական էջի մատչելիությունն  
այլ անձանց և նրանց կողմից տեղադրվող  
նյութերի համար:

Սոցիալական ցանցերի որոշ կայքեր, գրուցասենյակներ  
կամ բլոգերունեն գաղտնիության ուժեղ կարգավորումներ:  
Խոսեք ձեր երեխաների հետ այդ կարգավորումների և  
ձեր սպասելիքների մասին այն առումով, թե ով պետք է  
կարողանա տեսնել ձեր երեխայի անձնական էջը:

Վերանայեք ձեր երեխաների  
ընկերների ցանկը:

Հնարավոր է ցանկանաք սահմանափայել ձեր  
երեխաների առցանց «ընկերների» ցանկը, թողնելով  
միայն նրանց, ում երեխաները իրապես ճանաչում են:






## Խոսք ձեր պատանի երեխաների հետ սեքսի մասին առցանց խոսակցություններից խուսափելու անհրաժեշտության վերաբերյալ:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ այն պատանիները, ովքեր չեն խոսում սեքսի մասին անձանոթների հետ, դժվար թե կողոպտիչների հանդիպեն: Իրականում, հետազոտողները պարզել են, որ կողոպտիչները որպես կանոն չեն ձևացնում, որ իրենք երեխա կամ պատանի են, իսկ պատանիների մեծ մասը, ում հետ կապվում են անձանոթ չափահասները, փոքր-ինչ վախենալու են համարում դա: Պատանիները չպետք է տատանվեն նրանց անտեսելու կամ արգելափակելու հարցում:

## Իմացեք, թե ինչ են անում ձեր երեխաներն առցանց

Ծանոթացեք սոցիալական ցանցերի այն կայքերին, որոնցից օգտվում են ձեր երեխաները, որպեսզի իմանաք, թե ինչպես հասկանալ նրանց գործունեությունը: Եթե մտահոգություն ունեք այն մասին, որ ձեր երեխան սկսում է դրսևորել ռիսկային առցանց վարքագիծ, գուցե ցանկանաք ուսումնասիրել նրա այցելած սոցիալական ցանցերը՝ տեսնելու, թե ինչ տեղեկություններ է նա տեղադրում: Արդյոք ք նա ձևացնում է, թե ինքն ուրիշ մեկն է: Փորձեք փնտրել նրան իր անունով, մականունով, դպրոցով, սիրած գբաղմունքով, դասարանով կամ համայնքով:



## Խրախուսեք երեխաներին վստահել իրենց ներքին ձայնին, եթե ունեն կասկածներ


Խրախուսեք նրանց ձեզ պատմել, եթե իրենց սպառնում է ինչ-որ մեկը կամ ցանցում ինչ-որ բանի պատճառով անհարմար են զգում: Այնուհետև կարող եք օգնել նրանց իրենց մտահոգությունները հաղորդելու ուստիկանությանը և սոցիալական ցանցի կայքին: Այդ կայքերից շատերն ունեն հղումներ, որոնց միջոցով օգտատերերը կարող են ահազանգել իրավունքները ոտնահարող, կասկածելի կամ ոչ պատշաճ վարքագծի վերաբերյալ:

## Սսեք ձեր երեխաներին, որ չներկայանան որպես այլ անձ

Բացատրեք ձեր երեխաներին, որ ճիշտ չէ ստեղծել կայքեր, էջեր կամ տեղադրել նյութեր այլ անձանց անունից, օրինակ՝ ուսուցիչների, դասարանցիների կամ մտացածին մեկի:

## Ստեղծեք ապահով Համացանցային անուններ

Խրախուսեք երեխաներին մտածել այն մասին, թե ինչ տպավորություն են թողնում Համացանցային անունները: Լավ Համացանցային անունը շատ բան չի բացահայտի այն մասին, թե իրենք քանի տարեկան են, որտեղ են ապրում և ինչ սեռի են: Գաղտնիության նկատառումներից ելնելով՝ ձեր երեխայի ակնթարթային հաղորդագրությունների անունը չպետք է նույնը լինի, ինչ էլ. փոստինը:



## Օգնեք ձեր երեխաներին հասկանալ, թե որ տեղեկո թյո նները պետք է մնան գաղտնի

Բացատրեք նրանց, թե ինչո է կարևոր իրենց, ընտանիքին և ընկերներին վերաբերող որոշ բաներ գաղտնի պահել: Այնպիսի տեղեկությունները, ինչպիսիք են սոցիալական քարտի համարը, տան հասցեն, հեռախոսահամարը և ընտանիքի գույքային դրության մասին տեղեկությունները, օրինակ՝ բանկի հաշվեհամարը կամ վարկային քարտի համարը, գաղտնի են և պետք է դրանք գաղտնի պահել:

### ԿԻՐԱՌԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Արդյո՞ք դուք կամ ձեր երեխաները ներբեռնում եք «կիրառական ծրագրեր» կամ հավելվածներ հեռախոսի մեջ կամ սոցիալական ցանցի կայք: Ներբեռնումները կարող են այդ ծրագրերը մշակողներին մատչելի դարձնել անձնական բնույթի տեղեկություններ, որոնք անգամ կապ չունեն տվյալ ծրագրի նպատակների հետ: Մշակողները կարող են իրենց հավաքած տեղեկությունները փոխանցել մարկետոլոգների կամ այլ ընկերո թյո նների: Առաջարկեք ձեր երեխաներին ստուգել գաղտնիության կարգավորումները՝ տեսնելու, թե ինչպիսի տեղեկություններ են մատչելի դառնում այդ հավելվածների համար: Արդյո՞ք պարզելը, թե ինչ համի պաղպաղակ եք դուք իրականում արժի, որ դուք ձեր կյանքի կամ ձեր երեխաների կյանքի մանրամասները հաղորդեք այլ անձանց:

## ԿԻՔԵՌՅԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐ

Կիրեռհետապնդումներն այն հետապնդումները կամ ունեցություններն են, որոնք տեղի են ունենում Համացանցում: Հետապնդում կարող է տեղի ունենալ էլ. փոստով, տեքստային հաղորդագրո թյամբ, առցանց խաղի կամ սոցիալական ցանցի կայքում մեկնաբանություններ թողնելու միջոցով: Այն կարող է պարունակել բամբասանք կամ պատկերներ՝ ինչ-որ մեկի անձնական էջում տեղադրված կամ այլ անձանց փոխանցած: Հետապնդումը կարող է լինել խումբ կամ էջ ստեղծելու միջոցով՝ անձին մեկուսացնելու նպատակով:

Խոսքեր երեխաների հետ կիրեռհետապնդումների մասին: Բացատրեք երեխաներին, որ նրանք չեն կարող թաքնվել այն բառերի հետևում, որ տպում են կամ այն պատկերների հետևում, որ տեղադրում են: Վիրավորական հաղորդագրությունները ոչ միայն ցավ են պատճառում դրանց թիրախը հանդիսացող անձանց, այլև վատ տպավորություն են ստեղծում այդ վիրավորանքները տարածողների մասին: Դրանք կարող են ընկերների ծաղրուծանակի առարկան դարձնել երեխաներին կամ հանգեցնել պատժի պետական մարմինների կողմից:

Խնդրեք երեխաներին ձեզ իմաց տալ, եթե որևէ առցանց հաղորդագրություն կամ պատկեր նրանց համար սպառնալից է երևում կամ ցավ է պատճառում նրանց: Եթե անհանգիստ եք ձեզ երեխայի անվտանգության համար, զանգահարեք ոստիկանություն:

Ընթերցեք մեկնաբանությունները: Կիրեռհետապնդումները հաճախ ենթադրում են չարամիտ մեկնաբանություններ: Ժամանակ առ ժամանակ ստուգեք ձեր երեխայի էջը՝ տեսնելու, թե ինչ կա այնտեղ:

▶ Պաշտպանեք նրա անձնական էջը: Եթե ձեր երեխան գտնում է անձ նա կան էջ, որը ստեղծ վել կամ փոփոխվել է առանց իր համաձայնության, կապ վեք կայ քի հա մար պա տաս իս նա տո ըն կե բո թյան հետ, որպեսզի այն հե ռաց նի այդ էջը:



Ար գելա փա կեք կամ ջնջեք կիբեռ հե տապն դողին: Եթե հետապն դումն իրա կա նաց վում է ակն թարթալին հադորդագ բոթյուն ների կամ այլ առցանց ծառայության միջոցով, որը պահանջում է «ընկեր ների» կամ «լավագույն ըն կեր ների» ցանկ, հեռացրեք հետապնդողին այդ ցանցկից կամ արգելափակեք այդ օգտա տիրոջ անունը կամ էլ. փոստի հասցեն:

Օգնեք դադարեցնել կիբեռհետապնդումները: Եթե երեխան տեսնում է, որ ինչ-որ մեկը ենթարկվում է կիբեռհետապնդման, խրախուսեք, որպեսզի նա փորձի դադարեցնել դա, օրինակ՝ չմասնակցելու կամ որևէ բան չտարածելու միջոցով կամ էլ հետապնդողին ասելով, որ դադարեցնի:

Հետազոտողներն ասում են, որ հետապնդումը որպես կանոն շատ արագ դադարում է, երբ դրա գոհի ընկերներն են միջամտում: Առցանց կիբեռհետապնդումը կարելի է նաև դադարեցնել համապատասխան կայքին կամ ցանցին ահազանգելով:

Ճանաչեք կիբեռհետապնդման նշանները:

▶ Կարող է արդյո՞ք ձեր երեխան լինել հետապնդողի դերում: Դիտարկեք հետապնդողի վարքագծի նշանները, օրինակ՝ այլ երեխաների բացասական պատկերների ստեղծումը:


Հիշեք, որ դուք օրինակ եք ծառայում ձեր երեխաների համար: Երեխաները սովորում են մեծահասակների բարբասանքից և այլ չարակամ վարքագծից:

## ▶ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅԱՆՑՈՒՄ



Էլ. փոստը, զրույցները, ակնթարթային հաղորդագրությունները, տեսազանգերն ու տեքստային հաղորդագրությունները հաղորդակցության արագ և հարմար միջոցներ են:

Սակայն հիմնական հարցերը՝ **ինչ** ենք ասում, **երբ** ենք ասում և **ինչու** ենք ասում, նույնն են Համացանցում և Համացանցից դուրս: Հարգալից վերաբերմունքն ու առողջ դատողությունը յուրաքանչյուր հաղորդակցության կարևոր բաղադրիչներն են՝ անկախ այն բանից, թե որտեղ և ինչպես է այն տեղի ունենում:





## Ի՞նչ կարող եք անել

Զրուցեք ձեր երեխաների հետ առցանց վարվելակերպի մասին:

- ▶ Քաղաքավարությունը կարևոր է: Ուսուցանեք ձեր երեխաներին Համացանցից դուրս լինել քաղաքավարի: Զրուցեք նրանց հետ առցանց ևս քաղաքավարի լինելու անհրաժեշտության մասին: Հաղորդագրություններ ուղարկելը կարող է թվալ արագ և «անդեմ», սակայն քաղաքավարության նշանները, ինչպիսիք են «խնդրեմք» և «շնորհակալությունը» նրանցում տարածված բառեր են:
- ▶ Իջեցրեք տոնը: ՄԵԾԱՏԱՌԵՐՈՎ տեքստեր գրելը, բացականչական նշանների բազմությունը կամ ընդգծված մեծ տառատեսակները համացանցում համարժեք են գոռգոռալուն: Մարդկանց մեծ մասը վատ է վերաբերվում մեծադողող խոսքերին:
- ▶ “Շ:” և “Բոլորին պատասխանել”-ու ընտրության հարցում եղեք զգույշ: Առաջարկեք ձեր երեխաներին դիմադրել իրենց կոնտակտների ցանկում եղած բոլորին ինչ-որ բան ուղարկելու գայթակհությանը:
- ▶ Խուսափեք շղթայական նամակներից: Շղթայական նամակների կամ էլ. փոստի մեծ մասը լավագույն դեպքում տհաճ է, իսկ վատագույն՝ կեղծիք: Շատերը պարունակում են վնասակար ծրագրեր, ինչպիսիք են վիրուսներն ու լրտեսածրագրերը: Խնդրեք ձեր երեխաներին չբացել և դրանք ուրիշներին չուղարկել:

## Ապահովեք գաղտնիության խիստ կարգավորումներ ձեր երեխաների ակնթարթային հաղորդագրությունների և տեսազանգերի հաշիվներում:

ԱՀ ծրագրերի մեծ մասը թույլ է տալիս ծնողներին իմանալ կարող են արդյոք իրենց երեխաների կոնտակտների ցանկում գտնվող անձինք տեսնել նրանց առցանց կարգավիճակը: ԱՀ և էլ. փոստի կարգավորումները թույլ են տալիս ծնողներին որոշելու, թե ով կարող է հաղորդագրություններ ուղարկել իրենց երեխաներին և արգելափակել ցանկում չներառված անձանց:

## Հարցրեք ձեր երեխաներին, թե ում հետ են շփվում Համացանցում:

Ճիշտ կլինի նաև իմանալ, թե ում հետ են նրանք շփվում Համացանցում:



## Պատմեք երեխաներին էլ. փոստի ուժեղ գաղտնաբառեր օգտագործելու և դրանք պաշտպանելու մասին:

Որքան ավելի երկար է գաղտնաբառը, այնքան ավելի դժվար է այն կոտրելը: Անձնական տեղեկությունները, մուտքանունը, տարածված բառերը կամ ստեղնաշարի վրա իրար մոտ գտնվող տառերը անվտանգ գաղտնաբառեր չեն: Երեխաները կարող են պաշտպանել իրենց գաղտնաբառերը՝ դրանք որևէ մեկին չհաղորդելով:

## Հիշեցրեք ձեր երեխաներին պաշտպանել իրենց անձնական բնույթի տեղեկությունները:

Սոցիալական քարտի համարը, հաշվեհամարները  
և գաղտնաբառերն պետք է գաղտնի պահել:

## Անձնական տվյալների որս

Անձնական տվյալների որսը կամ ֆիշինգն այն երևույթն է, երբ կեղծարարները տեքստի, էլ. փոստի կամ դուրս լողացող պատուհաններով ստիպում են մարդկանց հաղորդել իրենց անձնական տեղեկությունները: Հետո նրանք դա օգտագործում են ինքնուրույն կեղծման նպատակով:

## Ահա թե ինչպես կարող եք դուրք կամ ձեր երեխաները խուսափել ֆիշինգ հաղորդագրություններից

Մի պատասխանեք այնպիսի հաղորդագրությունների, որոնք հայցում են ձեր անձնական կամ ֆինանսական տեղեկությունները և այդ հաղորդագրություններում պարունակվող որևէ հղում մի բացեք: Դիմադրեք այդ հաղորդագրությունից հղումները ձեր զննարկիչ արտատպելու մղումներին ևս: Եթե ցանկանում եք ստուգել ֆինանսական հաշիվը, ապա տպեք այն ձեզ ուղարկված հաշվի քաղվածքից:

Հեռախոսով ի պատասխան տեքստային հաղորդագրության մի հայտնեք մասնավոր բնույթի տեղեկություններ: Որոշ կեղծարարներ տեքստային հաղորդագրություններ են ուղարկում, որոնք առերևույթ իրական գործարար հաղորդագրությունների են նման և խնդրում ձեզ զանգահարել մի հեռախոսահամարի թարմացնելու ձեր հաշվի տվյալները կամ ստանալու փոխհատուցում: Եթե նրանց հաղորդեք ձեր մասնավոր տվյալները, նրանք դա կօգտագործեն ձեր անունով ծախսեր կատարելու համար:

- ▶ Զգույշ եղեք հավելվածներ բացելիս կամ ֆայլեր ներբեռնելիս ձեր ստացած էլ. փոստից՝ անկախ այն բանից, թե ով է դրանք ուղարկել: Անսպասելի ֆայլերը կարող են պարունակել վիրուսներ կամ լրտեսաձրագրեր, որոնց մասին չի իմանում անգամ դրանք ուղարկողը:
- ▶ Օգտվեք անվտանգության ծրագրաշարից և կանոնավոր կերպով թարմացրեք այն:
- ▶ Կարդացեք ձեր նամակները. վերանայեք վարկային քարտի և բանկային հաշվի քաղվածքները դրանք ստանալու պահին՝ ստուգե լու, թե արդյոք դրանք պարունակում են չարտոնված ծախս սեր:
- ▶ Անձնական տվյալներ որսացող նամակներն ուղարկեք [spam@uce.gov](mailto:spam@uce.gov) և այն ընկերություն, բանկ կամ կազմակերպություն, որը ներկայացված է ֆիշինգ էլ. փոստում: Կարող եք նաև հաղորդում ներկայացնել Հակաֆիշինգային աշխատանքային խմբին հետևյալ հասցեով՝ [reportphishing@antiphishing.org](mailto:reportphishing@antiphishing.org).
- ▶ Այս գործողություններում ներգրավեք նաև ձեր երեխաներին, որպեսզի նրանք կարողանան ձևավորել համացանցային անվտանգության լավ սովորություններ: Որսացեք «ուսուցողական պահերը». Եթե անձնական տվյալներ որսացող նամակ եք ստացել, ցուցադրեք այն ձեր երեխաներին՝ օգնելու նրանց հասկանալ, որ համացանցային հաղորդագրությունները միշտ չէ, որ այն են, ինչ թվում են:

# ▶ ՀԱՐԺԱԿԱՆ ՀԵՌԱԽՈՍՆԵՐ ՇՓՎԵԼ ԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԱԿՆԹԱՐԹՈՐԵՆ



Ուսուցանեք ձեր երեխաներին բջջային հեռախոս  
օգտագործելիս մտածել անվտանգության մասին:

Ո՞ր տարիքում է ճիշտ երեխայի համար ունենալ  
բջջային հեռախոս: Պետք է հաշվի առնեք ձեր  
երեխայի տարիքը, հասունությունը և ձեր  
ընտանիքում ձևավորված խաղի կանոնները:  
Արդյոք ձեր երեխան այնքան պատասխանատու է,  
որ կհետևի այն կանոններին, որ դուք կամ դպրոցը  
կսահմանեք հեռախոսից օգտվելու համար:

Առցանց բազում կիրառական ծրագրեր կան  
նաև շարժական հեռախոսներում, այդ թվում՝  
սոցիալական ցանցեր, բլոգեր, նյութի վերբեռնում,  
մեդիատեքստերի տարածում և տեսանյութերի  
խմբագրում: Ուսուցանեք ձեր երեխաներին

մտածել անվտանգության մասին  
բջջային հեռախոսից օգտվելիս:



## Ի՞նչ կարող եք անել

### Զգուշավորությամբ օգտագործեք հեռախոսով լուսանկարներ կամ տեսանյութեր տարածելու հնարավորությունը

Շարժական շատ հեռախոսներ այժմ ու նեն տեսախցիկներ և տեսանյութեր նկարահանելու հնարավորություն, ինչը հեշտացնում է ցանկացած պահի ինչ-որ բան նկարելը և տարածելը: Այս գործիքները կարող են զարգացնել պատանիների ստեղծարար կարողությունները, սակայն դրանք բարձրացնում են նաև հարցեր՝ կապված անձնական հեղինակության և անվտանգության հետ: Խրախուսեք երեխաներին մտածել իրենց և այլոց անձնական կյանքի գաղտնիության մասին նախքան բջջային հեռախոսով լուսանկարներ կամ տեսանյութեր տարածելը: Հեշտությամբ կարելի է առանց լուսանկարի հեղինակի կամ լուսանարված անձի գիտության կամ համաձայնության համացանցում տեղադրել լուսանկարներ և տեսանյութեր: Դա կարող է անհարմարություն պատճառել և անգամ սպառնալ որևէ մեկի անվտանգությանը: Ավելի հեշտ է նախապես զգուշավոր լինել տարածածի հարցում, քան փորձել վերացնել պատճառով ավան ավելի ուշ:

### Մի նպաստեք շարժական տեխնոլոգիաներով կատարվող հետապնդումներին

Շարժական հեռախոսները կարող են օգտագործվել ինչ-որ մեկին հետապնդելու նպատակով: Խոսեք երեխաների հետ այն մասին, որ նրանք պետք է վերաբերվեն այլ անձանց այնպես, ինչպես կցանկանային, որ վերջիններս վերաբերվեն իրենց: Վարվեցողության և էթիկայի այն կանոնները, որ նրանց սովորեցնում եք, կիրառելի են նաև հեռախոսների պարագայում:

## Շարժական տեխնոլոգիաներով սոցիալական ցանցերի հարցում առաջնորդվեք առողջ դատողությամբ

Սոցիալական ցանցերի շատ կայքեր թույլ են տալիս օգտատերերին ստուգել իրենց անձնական էջը և տեղադրել մեկնաբանություններ իրենց հեռախոսներից՝ ապահովելով մատչելիություն ամենուր: Սա նշանակում է, որ այն գոհիչները, որ տեղադրել էք ձեր տան համակարգչի վրա, չեն սահմանափակում երեխաների գործողությունները հեռախոսով: Եթե ձեր երեխաները շարժական հեռախոսներից են օգտվում իրենց անձնական էջերից կամ բլոգերից, հիշեցրեք նրանց առաջնորդվել առողջ դատողությամբ իրենց հեռախոսներից սոցիալական ցանցեր մտնելիս:

## Ծանոթացեք սոցիալական քարտեզին

Շարժական շատ հեռախոսներ այժմ ունեն GPS տեխնոլոգիա՝ Գլոբալ տեղորոշման համակարգ: Նման հեռախոս ունեցող երեխաները կարող են պարզել, թե որտեղ են իրենց ընկերները, իսկ ընկերներն էլ կարող են պարզել, թե որտեղ են իրենք: Խորհուրդ տվեք երեխաներին օգտվել այդ տեխնոլոգիայից միայն այն ընկերների պարագայում, ում նրանք անձամբ են ճանաչում և վստահում և չհեռարձակել իրենց գտնվելու վայրն ի լուր աշխարհի շաբաթվա յոթ օրերի և օրվա քսան չորս ժամվա ընթացքում: Որոշ օպերատորներ առաջարկում են GPS ծառայություններ, որոնք թույլ են տալիս ծնողներին պարզել իրենց երեխաների գտնվելու վայրը:




## Որոշեք, թե որոնք են ճիշտ տարբերակները և բնութագրիչները ձեր երեխայի հեռախոսի վրա

Ձեր բջջային օպերատորն, ինչպես նաև հեռախոսը պետք է ձեզ ընտրու թյուն ներ առաջարկեն գաղտնիության կարգավորումների և երեխայի անվտանգության հսկողության համար: Շատ օպերատորներ հնարավորություն են տալիս ծնողներին անջատելու այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են ցանցի մատչելիությունը, տեքստային հաղորդագրություններ ուղարկելը կամ ներբեռնումները: Որոշ բջջայիններ նախատեսված են հատուկ երեխաների համար: Նրանք պարզ են գործածության համար և ունեն համացանցի սահմանափակ մատչելիություն, ղոպների կառավարում, համարների գաղտնիացում և թեժ գծերի կոճակներ:

## Խելացի վարվեք սմարթֆոնների հետ

Շատ հեռախոսներ առաջարկում են նաև Համացանցի մատչելիություն: Եթե ձեր երեխաներն օգտվելու են հեռախոսից, և դուք մտահոգված եք այն հարցով, թե նրանք ինչ կգտնեն համացանցում, անջատեք համացանցի մատչելիությունն ու միացրեք գոհիչները:



## Մշակեք կանոններ բջջային հեռախոսների վերաբերյալ

Զրուցեք երեխաների հետ այն մասին, թե երբ և որտեղ է ճիշտ օգտվել բջջային հեռախոսից: Թերևս դուք ցանկանաք սահմանել հեռախոսի պատասխանատու օգտագործման կանոններ: Արդյո՞ք դուք թույլ եք տալիս հեռախոսազանգեր կամ տեքստային հաղորդագրություններ ուղարկել ճաշի սեղանի շուրջ: Արդյո՞ք նրանք պետք է ձեզ հանձնեն իրենց հեռախոսները տնային առաջադրանքները կատարելիս կամ քնելիս:

### Օրինակ ծառայեք

Շարժական հեռախոսների կիրառական ծրագրերը ուշադրությունը շեղելու լրացուցիչ առիթներ են ստեղծում: Շատ երկրներում օրինական չէ բջջայինով տեքստեր հավաքել կամ հեռախոսով խոսել մեքենա վարելիս, և այն վտանգավոր է ամենուրեք: Օրինակ ծառայեք երեխաների համար և խոսեք նրանց հետ ցրված վիճակում մեքենա վարելու վտանգների մասին:

## ՍԵՔՍԻՆԳ


Շարժական հեռախոսով սեռական բնույթի լուսանկարներ, տեսանյութեր կամ հաղորդագրություններ ուղարկելը կամ փոխանցելը կոչվում է «սեքստինգ»: Ասացեք ձեր երեխաներին, որ նման բան չանեն: Ոչ միայն կարող են վտանգել իրենց հեղինակությունը և ընկերությունը՝ նրանք հնարավոր է օրենք խախտեն, եթե ստեղծեն, փոխանցեն և անգամ պահպանեն նման հաղորդագրություններ: Եթե պատանիները իմանան իրենց գործողությունների հետևանքների մասին, քիչ է հավանական է, որ սխալ ընտրություն անեն:



## ՏԵՔՏՍԵՐ ՈՒՂԱՐԿԵԼԸ ԵՎ ԱՏԱՆԱԼԸ

Բջջային հեռախոս ունեցող ցանկացած երեխա կարող է այն օգտագործել նաև տեքստային հաղորդագրություններ և պատկերներ ուղարկելու և ստանալու համար: Դա նման է էլ. փոստին կամ ակնթարթային հաղորդագրություններին և այստեղ ևս կիրառելի են էթիկետի և անվտանգության նույն կանոնները: Եթե ձեր երեխաներն ուղարկում կամ ստանում են տեքստային հաղորդագրություններ, խրախուսեք նրանց.

- Հարգել այլոց. կրճատ գրված տեքստերը կարող են հանգեցնել թյուրիմացությունների: Նախքան տեքստային հաղորդագրություն ուղարկելը մտածեք, թե ինչպես այն կընթերցվի և կընկալվի,
- Անտեսել անձանոթ անձանցից ստացված տեքստային հաղորդագրությունները,
- Սովորել, թե ինչպես արգելափակել համարներ իրենց բջջային հեռախոսներում,
- Խուսափել բջջային հեռախոսի համարը համացանցում տեղադրելուց,
- Ի պատասխան տեքստային հաղորդագրության՝ երբեք չտալ ֆինանսական բնույթի տեղեկություններ:





Զեր համակարգչի անվտանգությունը կարող է ազդել Համացանցում ձեր և երեխայի անվտանգության վրա:

Վնասակար ծրագրաշարը ստուգում և հսկում է ձեր համակարգչի օգտագործումը, տեղադրում վիրուսներ, ուղարկում անցանկալի դուրսլողացող գովազդներ, վերահասցեագրում ձեր համակարգիչը դեպի այնպիսի կայքեր, որոնք դուք չեք փնտրում կամ գրառում է ձեր հարվածները ստեղնաշարին:

Զեր համակարգչում հայտնված վնասակար ծրագիրը կարող է թույլ տալ ինչ-որ մեկին հափշտակելու ձեր ընտանիքի անձնական բնույթի տեղեկությունները:

## Օգտվեք անվտանգության ծրագրաշարից և պարբերաբար թարմացրեք այն:


Հակավիրուսային և հակալրտեսական ծրագրաշարերը զննում են մտից հաղորդակցությունները խնդրահարույց ֆայլեր հայտնաբերելու նպատակով, հրապատը արգելափակում է չլիազորցած աղբյուրներից ստացվող հաղորդակցությունները: Փնտրեք այնպիսի ծրագրաշար, որը կարող է վերացնել ֆասսը և թարմացվում է ավտոմատ կերպով:

## Արդիականացրեք ձեր օպերացիոն համակարգն ու զննարկիչը և տեղեկացրեք դրանց անվտանգության բնութագրիչների մասին:

Հաքերներն օգտվում են այն օպերացիոն համակարգերի և զննարկիչների ընձեռած հնարավորություններից, որոնց անվտանգությունը թարմացված չէ: Ուժեղացրեք ձեր համակարգչի անվտանգությունը՝ փոփոխելով ձեր օպերացիոն համակարգի կամ զննարկիչի անվտանգության և գաղտնիության ավտոմատ կարգավորումները:

## Չգուշացեք «անվճար» բաներից:

Անվճար խաղերը, հեռախոսի զանգերի երաժշտությունը կամ այլ ներբեռնումները կարող են թաքցնել փաստակար ծրագրեր: Ասացեք ձեր երեխաներին ոչինչ չներբեռնել, քանի դեռ նրանք վստահություն չունեն աղբյուրի նկատմամբ և չեն գննել այն անվտանգության ծրագրաշարի միջոցով:



## Ֆայլերի ապակենտրոնացված փոխանակում

- Որոշ երեխաներ համացանցում փոխանակում են երաժշտություն, խաղեր կամ ծրագրաշարեր: Ֆայլերի ապակենտրոնացված փոխանակումը թույլ է տալիս մարդկանց փոխանակել նմանաբնույթ ֆայլեր համակարգիչների ոչ ֆորմալ ցանցի միջոցով, որոնցում տեղադրված է նույն ծրագրաշարը: Եթե ձեր երեխաները ներբեռնում են հեղինակային իրավունքով պաշտպանված նյութեր, կարող են իրավական բնույթի հարցեր առաջանալ: Երբեմն լրտեսածրագրերը, վնասակար ծրագրերը, պոռնոգրաֆիան կարող են թաքնված լինել փոխանակվող ֆայլերում: Ստորև ներկայացված են որոշ օգտակար խորհուրդներ՝ ֆայլերը անվտանգ փոխանակելու համար:
- Պատշաճ կերպով տեղադրեք ֆայլերի փոխանակման ծրագրաշարը: Ակտիվացրեք համապատասխան ավտոմատ կարգավորումները, որպեսզի չփոխանակեք մասնավոր բնույթի ոչ մի տեղեկություն: Ֆայլերի ապակենտրոնացված փոխանակման գրեթե բոլոր կիրառական ծրագրերը կտեղավորեն ներբեռնումները ձեր «Պահպանել» կամ «Ներբեռնել» թղթապանակում: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ են համապատասխան կարգավորումներ: Եթե ավտոմատ կարգավորումները պատշաճ կերպով չապահովեք, ապակենտրոնացված ցանցի այլ օգտատերեր կարող են բացել ձեր այն ֆայլերը, որոնք դուք փոխանակելու մտադրություն երբևէ չէք ունեցել, այդ թվում՝ կոշտ սկավառակում առկա մասնավոր բնույթի փաստաթղթերը, ինչպիսիք են հարկային և այլ ֆինանսական փաստաթղթերը:
- Նախքան ձեր երեխաները կբացեն ներբեռնված որևէ ֆայլ՝ երաժշտություն, խաղ, տեսանյութ, խորհուրդ տվեք, որպեսզի նրանք օգտվեն անվտանգության ծրագրաշարից՝ զննելու այն: Համոզվեք, որ անվտանգության ծրագրաշարը թարմացված է և գործում է, երբ համակարգիչը միացած է համացանցին:



Եթե դուք մտահոգված եք, թե ինչ են տեսնում տարրական դպրոցի տարիքի ձեր երեխաները Համացանցում՝ օգտվեք համապատասխան գործիքներից: Թեև ծնողական հսկողության գործիքներն արդյունավետ են փոքրահասակ երեխաների պարագայում, պատանի տարիքում, տարիներ շարունակ համակարգչից օգտվող երեխաները կարող են շրջանցել դրանք:

# Ինչ կարող եք անել

## Ծնողական հսկողո թյան տարբերակները հետևյալն են՝

### Զտումն ու արգելափակումը

Զտման և արգելափակման գործիքները սահմանափակում են որոշ կայքերի, բառերի կամ պատկերների մատչելիությունը: Որոշ գործիքներ իրենք են որոշում՝ ինչը գտել, մյուսները ընտրությունը թողնում են ծնողներին: Որոշ գտիչներ կիրառելի են կայքերի նկատմամբ, մյուսները՝ էլ. փոստի, զրուցարանների և ակնթարթային հաղորդակցության:

### Ելից նյութերի արգելափակումը

Այս ծրագրաշարը թույլ չի տալիս երեխաներին անձնական բնույթի տեղեկություններ տարածել համացանցում, զրուցասենյակներում կամ էլ. փոստի միջոցով:

### Ժամանակի սահմանափակումը

Այս ծրագրաշարը թույլ է տալիս ձեզ սահմանափակել երեխայի համացանցում գտնվելու ժամանակը և սահմանում է օրվա այն ժամերը, երբ համացանցը կարող է մատչելի լինել երեխայի:

### Զննարկիչներ երեխաների համար

Այս զննարկիչները գտում են այն բառերն ու պատկերները, որոնք պատշաճ չեն երեխաների համար:

## Երեխաների համար նախատեսված որոնման համակարգեր

Երեխաների համար նախատեսված որոնման համակարգերը կատարում են սահմանափակ որոնում կամ գնում են որոնման արդյունքները և նյութերը՝ համոզվելու, որ դրանք պատշաճ են երեխաների համար:

## Մշտադիտարկման գործիքներ

Այս տիպի ծրագրաշարն ահագանգում է ծնողներին համացանցում կատարվող գործողությունների մասին՝ առանց արգելափակելու մատչելիությունը: Որոշ գործիքներ մտապահում են երեխայի այցելած կայքերի հասցեները, մյուսները նախագգուշացնող հաղորդագրություն են ուղարկում, երբ երեխան այցելում է որոշակի կայքեր: Մշտադիտարկման գործիքները կարող են օգտագործվել երեխայի գիտությամբ կամ առանց դրա:



## Երեխաներին համացանցում պաշտպանելու լավագույն միջոցը նրանց հետ զրո ցելն է:

Կարևոր տեղեկությունների համար երեխաների մեծ  
մասը դիմում է ծնողներին: Թեև երեխաները գնահատում  
են իրենց ընկերների կարծիքը, սակայն կարևորագույն  
հարցերում հակված են վստահելու իրենց ծնողների  
օգնությանը:



# ՊԱՇՏՊԱՆԵՔ ՎԱՂ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՐԵՒԱՑԻ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԳԱՐՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ



Համացանցում երեխաների անձնական կյանքի գաղտնիության պաշտպանության ակտը (COPPA) կոչված է պաշտպանելու երեխաների անձնական կյանքի գաղտնիությունը կոնկրետ իրավունքներ ձեռք բերապահելու միջոցով: Ընդունված լինելով սպառողների պաշտպանության պետական մարմնի՝ Առևտրի դաշնային հանձնաժողովի կողմից, COPPA-ն պահանջում է, որ կայքերը 13-ից ցածր տարիքի երեխաների մասին տեղեկություններ հավաքագրելուց կամ տարածելուց առաջ ստանան ծնողների համաձայնությունը: Օրենքը կիրառելի է 13-ից ցածր տարիքի երեխաների համար նախատեսված կայքերի, ինչպես նաև լայն լսարանի համար նախատեսված կայքերի նկատմամբ, որոնց օգտատերերը կարող են 13 տարեկանից ցածր լինել: COPPA-ն պաշտպանում է այն տեղեկությունները, որ կայքերը հայցում են, ինչպես նաև այն տեղեկությունները, որ երեխաներն իրենք են հաղորդում կամ տեղադրում հետագայում:

COPPA-ն նաև պահանջում է, որ այդ կայքերում տեսանելի տեղադրված լինի գաղտնիության քաղաքականությունը: Այդ քաղաքականությունը պետք է մանրամասներ պարունակի այն մասին, թե ինչ տեսակի տեղեկություններ է հավաքելու կայքը և թե ինչ է անելու այդ տեղեկությունների հետ: Օրինակ՝ արդյոք պլանավորում է օգտագործել այդ տեղեկությունները երեխաների համար գովազդներ ուղղորդելու նպատակով կամ այլ կազմակերպություններ հաղորդելու նպատակով: Այդ քաղաքականությունում պետք է նաև նշված լինի, թե արդյոք այդ ընկերությունները համաձայն են նշված տեղեկությունները պահել անվտանգ և գաղտնի:

## Ինչ կարող եք անել

Օգտվեք COPPA-ով ձեզ վերապահված իրավունքներից: Ձեր երեխայի անձնական բնույթի տեղեկություններն արժեքավոր են, և դուք կարող եք շատ բան անել դրանք պաշտպանելու համար:

### Մի շտայլեք ձեր թույլտվությունները

Համացանցային կայքերը կարող են տարբեր կերպ հայցել ձեր համաձայնությունը, այդ թվում՝ սովորական և էլեկտրոնային փոստի միջոցով: Նախքան համաձայնություն տալը համոզվեք, որ գիտեք, թե կայքն ինչ տեղեկություններ է ցանկանում հավաքել և ինչ է պատրաստվում անել դրանց հետ: Եվ մտորեք, թե ինչին եք համաձայնում, իսկ ինչին՝ ոչ. հիշեք, որ այս հարցում չի գործում ամեն ինչ կամ ոչինչ սկզբունքը: Կարող եք, օրինակ, թույլ տալ, որ ընկերությունը հավաքի անձնական բնույթի որոշ տեղեկություններ, սակայն թույլ չտալ, որ այդ տեղեկությունները փոխանցվեն այլ անձանց:



## Իմացեք ձեր իրավունքները

Որպես ծնող՝ դուք իրավունք ունեք տեսնելու, ցանկացած անձնական բնույթի տեղեկություն, որ կայքը հավաքում է ձեր երեխայի մասին: Այդ տեղեկությունները տեսնելու պահանջով կայքին դիմելու դեպքում, պետք է ապացուցեք որ դուք իրապես սվյալ երեխայի ծնողն եք: Կայքի օպերատորները կարող ենք որոշել հեռացնել խնդրո առարկա տեղեկությունները: Դուք իրավունք ունեք հետ վերցնելու ձեր համաձայնությունը և պարտադրելու, որպեսզի ձեր երեխայի մասին հավաքված որևէ տեղեկություն հեռացվի:

## Ստուգեք, թե ինչ կայքեր են այցելում ձեր երեխաները:

Եթե կայքը պահանջում է, որ օգտատերը գրանցվի, պարզեք, թե ինչ տեղեկություններ է այն հայցում և որոշեք թե որոնք եք դուք տրամադրում: Համոզվեք նաև, արդյոք կայքը պահպանում է ամենատարրական կանոնները, ինչպիսիք են իր գաղտնիության քաղաքականությունը տեսանելի տեղադրելը:

## Վերանայեք գաղտնիության քաղաքականությունը

Գաղտնիության քաղաքականություն ունենալը չի նշանակում, որ այդ կայքն անձնական կյանքի գաղտնիք հանդիսացող տեղեկությունները գաղտնի է պահում: Քաղաքականությունը կարող է ձեզ օգնել պարզելու, թե արդյոք համաձայն եք տրամադրել այն տեղեկությունները, որ կայքը հավաքում և տարածում է: Եթե քաղաքականությունն ասում է, որ չկան սահմանափակումներ, թե ինչ է հավաքվում և ով կարող է այն տեսնել, ապա իրոք, սահմանափակումներ չկան:

## Հարցեր տվեք

Եթե ունեք հարցեր կայքի գործելակարգերի կամ քաղաքականությունների մասին, տվեք դրանք: Գաղտնիության քաղաքականության մեջ պետք է նաև ներառված լինեն այն անձի կոնտակտային տվյալները, որը կպատասխանի ձեր հարցերին:

## Ահազանգեք այն կայքերի մասին, որոնք խախտում են կանոնները

Եթե գտնում եք, որ կայքը տեղեկություններ է հավաքել ձեր երեխաներից կամ մի բան է նրանց վաճառել՝ խախտելով օրենքը, հաղորդեք այդ մասին ԱՂՀ-ին հետևյալ հասցեով՝ [ftc.gov/complaint](https://www.ftc.gov/complaint):



# ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

**Ավատար** – Գրաֆիկական երկրորդ ինքնությունը, որը ստեղծում էք Համացանցում օգտագործելու նպատակով, կարող է լինել 3D նիշ կամ պարզ պատկերակ՝ մարդու պատկերով կամ երևակայական:

**Վատ ծրագրերը** – Ծրագրաշար, որը ներառում է վիրուսներ և լրտեսածրագրեր, որոնց միջոցով հնարավոր է հափշտակել ձեր անձնական բնույթի տեղեկություններն, ուղարկել փոստաղբ և կատարել խարդախություն (Steu՝ Վնասակար ծրագրեր)

**Պահուստավորում** – Համակարգչային տվյալների կրկնօրինակների ստեղծում այն դեպքում, երբ ինչ-որ մի բան տեղի ունենա ձեր սարքի կամ օպերացիոն համակարգի հետ և ձեր տեղեկությունները կորեն:

**Արգելափակող ծրագրաշար** – Ծրագիր, որը գտում է Համացանցի բովանդակությունը և սահմանափակում կայքերի կամ բովանդակության մատչելիությունը կոնկրետ չափանիշների հիման վրա:

**Բլոգ** – «Համացանցային գրանցամատյանի» կարճ տարբերակը. կայք է, որտեղ դուք կանոնավոր կերպով տեղադրում եք ձեր դիտարկումները:

**Ընկերների ցանկ** – Անձանց ցանկ, ում հետ կարող եք գրուցել ԱՅ ծրագրի միջոցով:



**Չրուցասեյակ** – Առցանց տարածք, որտեղ կարող եք հանդիպել և փոխանակել տեղեկություններ «սենյակում» գտնվող այլ անձանց հետ հաղորդագրությունների տեսքով, որոնք հայտնվում են այլոց էկրաններին:

**COPPA** – Համացանցում երեխաների անձնական կյանքի գաղտնիության պաշտպանության ակտ, որը ծնողներին թույլ է տալիս հսկել, թե ինչ տեղեկություններ կարող են համացանցային կայքերը հավաքել 13-ից ցածր տարիքի իրենց երեխաների մասին:


**Կիբեռհետապնդում** – Առցանց տեղի ունեցող հետապնդումներ և ոտձգություններ, այդ թվում՝ շփոթեցնող նկարների և չարամիտ մեկնաբանությունների տեղադրում անձի էջում կամ դրանց ուղարկում ԱՅ-ների միջոցով:


**Հրապատ** – Գործիքակազմ կամ ծրագրաշար, որն արգելափակում է ձեր համակարգիչ մտնող կամ դրանից դուրս եկող չլիազորված հաղորդակցությունը, թույլ չի տալիս հաքերներին կորզել ձեր անձնական բնույթի տեղեկությունները:

**GPS** – Global Positioning System, Գլոբալ տեղորոշման համակարգ, որն օգտագործվում է ավտոմեքենաների կամ հեռախոսների մեջ՝ որոշելու տեղակայումը, տրամադրելու ուղղություններ:

**Հաքերային հարձակում** – Հարձակում համակարգչի կամ ցանցի վրա՝ անվտանգության միջոցները շարքից հանելու կամ շրջանցելու միջոցով:

**Անխթարթային հաղորդակցություն (IM)** – Հնարավորություն է տալիս երկու և ավելի մարդկանց զրուցել իրական ժամանակում և տեղեկացնում է, երբ ընկերների ցանցկից ինչ-որ մեկը Համացանցում է:





**Մտավոր սեփականություն (IP)** – Ստեղծագործության արդյունքներ, որոնք ունեն տնտեսական արժեք, այդ թվում՝ հեղինակային իրավունքով պաշտպանված սեփականությունը, ինչպիսիք են գրքերը, լուսանկարները և երգերը:

**Օգտատիրոջ սահմանափակ հաշիվ** – կարգավորում, որը ապահովում է համակարգչի գործառնությունների և ծրագրերի սահմանափակ մատչելիություն:

**Վնասակար ծրագրեր** – Ներառում են վիրուսները և լրտեսածրագրերը, որոնք հափշտակում են անձնական տեղեկությունները, ուղարկում են փոստաղբ և կատարում խարդախություն (Տես վատ ծրագրեր)


**Գաղտնաբառ** – Գաղտնի բառ կամ արտահայտություն, որն օգտագործվում է օգտատիրոջ անվան հետ՝ ապահովելու մուտքը համակարգիչ կամ պաշտպանելու զգայուն տեղեկությունները համացանցում:

**Ծրագրային լրացում** – Ծրագրաշար, որը ներբեռնում են համակարգչային ծրագիրը նորոգելու կամ թարմացնելու նպատակով:

**Ֆայլերի ապակենտրոնացված փոխանակում** – Թույլ է տալիս առցանց փոխանակել ֆայլեր այդ թվում՝ երաժշտություն, ֆիլմեր կամ խաղեր համակարգիչների ոչ ֆորմալ ցանցի շնորհիվ, որոնք ունեն փոխանակման միևնույն ծրագրաշարը:

**Անձնական թվային օգնական** – կարող է օգտագործվել որպես շարժական հեռախոս, համացանցային զննարկիչ կամ շարժական մեդիա փլեյեր:





**Անձնական բնույթի տեղեկություններ** – տվյալներ, որոնք կարող են օգտագործվել ձեր ինքնությունը պարզելու համար, այդ թվում՝ ձեր անունը, հասցեն, ծննդյան ամսաթիվը կամ սոցիալական քարտի համարը:

**Անձնական տվյալների որս, ֆիշինգ** – ուղարկում են փոստաղբ, դուրս լողացող պատուհաններ կամ տեքստային հաղորդագրություններ՝ ստիպելու ձեզ բացահայտել անձնական, ֆինանսական կամ այլ բնույթի զգայուն տեղեկություններ:

**Գաղտնիության կարգավորումները** – Անձնական տվյալների որսը կամ ֆիշինգն այն երևույթն է, երբ կեղծարարները տեքստի, էլ. փոստի կամ դուրս լողացող պատուհաններով ստիպում են մարդկանց հաղորդել իրենց անձնական տեղեկությունները:

**Անձնական էջ** – անձնական էջ, որ դուք ստեղծում եք սոցիալական ցանցի կամ այլ կայքում՝ ձեր մասին տեղեկություններ փոխանակելու և այլոց հետ հաղորդակցվելու նպատակով:

**Անվտանգության ծրագրաշար** – բացահայտում և պաշտպանում է այն սպառնալիքներից ու խոցելիություններից, որոնք կարող են վնաս պատճառել ձեր համակարգին կամ անձնական բնույթի տեղեկություններին. ներառում է հակավիրուսներն ու հակալրտեսածրագրերը և հրապատերը:

**Սեքստինգ** – ուղարկել և փոխանցել սեքսուալ բնույթի նկարներ կամ հաղորդագրություններ շարժական հեռախոսից:



**Սմարթֆոն** – Շարժական հեռախոս, որն ունի առաջադեմ հնարավորություններ և բնութագրիչներ, ինչպիսիք են միացումը համացանցին կամ շարժական մեդիա փլեյերը:

**SMS** – «Կարճ հաղորդակցության ծառայություն»։ Տեխնոլոգիա, որը թույլ է տալիս տեքստային հաղորդագրություններ ուղարկել մի հեռախոսից մյուսը:

**Սոցիալական ցանցի կայք** – Համացանցային կայք, որը թույլ է տալիս ստեղծել անձնական էջ և միանալ այլոց:


**Լրտեսածրագիր** – Ձեր համակարգչում առանց ձեր համաձայնության տեղադրված ծրագրաշար՝ մշտադիտարկելու կամ վերահսկելու ձեր համակարգչի օգտագործումը:

**Տեքստերի փոխանցում** – կարճ հաղորդագրությունների ուղարկում մի շարժական հեռախոսից մյուսը:

**Դեռահաս** – 8-ից 12 տարեկան երեխա:

**Օգտատիրոջ անուն** – Ծածկանուն, որն օգտագործվում է գաղտնաբառի հետ մասին, որը մատչելի է դարձնում հաշիվներն ու համացանցային կայքերը:

**Տեսագանգեր** – Համացանցային ծառայություններ, որոնք թույլ են տալիս օգտատերերին հաղորդակցվել համացանցային տեսախցիկների օգնությամբ:



**Վիրտուալ աշխարհ** – Համակարգչի միջոցով ստեղծվող առցանց «վայր», որտեղ մարդիկ օգտագործում են ավատարներ՝ գրաֆիկական կերպարներ՝ ներկայացնելու իրենց:

**Վիրուս** – Վնասակար ծրագիր, որը մտնում է ձեր համակարգիչ, հաճախ էլ. փոստի հավելվածի միջոցով և ստեղծում ինքն իր կնկօրինակը:

**Համացանցային տեսախից** – տեսախցիկ, որը կարող է կենդանի ժամանակում տեսանյութ անել համացանցում, կարող է լինել համակարգչում կամ գնվել և տեղադրվել առանձին:

# ԼՐԱՅՈՒՑԻՉ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

**OnGuardOnline.gov** – OnGuard Online-ը ներկայացնում է համացանցային խարդախություններից պաշտպանվելու, համակարգիչները անվտանգ պահելու և անձնական կյանքի գաղտնիությունը պաշտպանելու խորհուրդներ:


**FTC.gov/idtheft** – Առևտրի դաշնային հանձնաժողովի համացանցային կայքը տեղեկություններ է տրամադրում ռիսկերը կանխելու, վտանգները բացահայտելու և պաշտպանվելու համար:

**CommonSenseMedia.org** – Common Sense Media-ը նպատակ է հետապնդում բարելավվել երեխաների և ընտանիքների կյանքը՝ տրամադրելով արժանահավատ տեղեկատվություն և ապահովելով կրթություն մեդիաների և տեխնոլոգիաների աշխարհում:

**ConnectSafely.org** – ConnectSafely-ն Tech Parenting Group-ի Web 2.0-ի կիրառումը ուսուցանելու ծրագիր է ծնողների, պատանիների և դասախոսների համար:

**CyberBully411.org** – Cyberbully411 առցանց հետաապնդումների թիրախ դարձած երիտասարդներին տրամադրում է ռեսուրսներ:

[www.dhs.gov/stophinkconnect](http://www.dhs.gov/stophinkconnect)



**GetNetWise.org** – Համացանցային կրթական հիմնադրամի ծրագիր է, որի շրջանակներում GetNetWise կոալիցիան համացանցի օգտատերերին ռեսուրսներ է տրամադրում՝ համացանցի մասին տեղեկացված լինելու համար:

**iKeepSafe.org** – iKeepSafe-ի կրթական ռեսուրսները երեխաներին ուսուցանում են գվարճալի և տարիքին համապատասխան մեթոդների միջոցով համացանցի անվտանգության, էթիկայի և տեխնոլոգիաների առողջ օգտագործման հիմնարար կանոնները:


**us-cert.gov** – ԱՄՆ համակարգչային արտակարգ իրավիճակների արձագանքման թիմը (US-CERT) պատասխանատու է պաշտպանելու կիբեռնհարձակումներից և աջակցելու գործադիր իշխանությանը: US-CERT-ը տարածում է պատճառաբանված և դատական պաշտպանության ենթակա կիբեռնանվտանգության տեղեկություններ լայն հանրությանը:

**NetSmartz.org** – The NetSmartz - ը անվտանգության ինտերակտիվ ուսուցողական ռեսուրս է Ամիեռացած և շահագործված երեխաների ազգային կենտրոնի կողմից ստեղծված:

**StaySafeOnline.org** – Կիբեռնանվտանգության ազգային դաշինքը նպատակ ունի ստեղծելու անվտանգության և ապահովության մշակույթ՝ տրամադրելով այնպիսի գիտելիքներ և գործիքներ, որոնք կկանխեն կիբեռնանվտանգությունները և կիբեռնհարձակումները:

**WiredSafety.org** – WiredSafety-ն տրամադրում է օգնություն, տեղեկատվություն և կրթություն համացանցի և շարժական տեխնոլոգիաների բոլոր տարիքի օգտատերերի համար:

**Safe.am** - Ապահով Համացանց Հայաստան ծրագրի առաքելությունն է տրամադրել երեխաներին և ծնողներին, սովորողներին և դասավանդողներին անհրաժեշտ տեղեկություններ և ուսումնական նյութեր նոր տեխնոլոգիաները ապահով և արդյունավետ օգտագործելու համար:



## Կիրեռանվտանգության հարցում իրազեկության ազգային տեղեկատվական արշավ

### Նախապատմություն

2009թ. Նախագահ Օբաման գլխավորել է Կիրեռոտարածքի քաղաքականության վերանայումը, որի շրջանակներում պետության կիրեռանվտանգության հիմունքները պետք է փոխակերպվեն ամուր և ճկուն ապագայի թվային ենթակառուցվածի: Որպես քաղաքականության վերանայման բաղադրիչ՝ անվտանգության դեպարտամենտին հանձնարարվել է ստեղծել կիրեռանվտանգության տեղեկատվական արշավ **Կանգնեք.Մտածեք. Միացեք**՝ ամերիկացիներին առցանց լինելու հետ կապված ռիսկերը հասկանալու համար:

Տեղեկատվական արշավին միանում են դաշնային և նահանգային իշխանությունները, ոլորտի ընկերությունները և շահույթ չհետապնդող կազմակերպությունները: Այդ գործընկերությունների միջոցով Կանգնեք.Մտածեք.Միացեք. տեղեկատվական արշավը կարողանում է ուսուցանել հազարավոր ամերիկացիների՝ տրամադրելով խորհուրդներ այն մասին, թե ինչպես պաշտպանել իրենց, իրենց ընտանիքները և երկրորդ:

**Կանգնեք. Մտածեք. Միացեք.**<sup>TM</sup> **հանրային իրազեկման ազգային տեղեկատվական արշավի նպատակն է խորացնել կիրառական գիտելիքները և հզորացնել ամերիկացի հանրությանը Համացանցում ավելի ապահով և անվտանգ լինելու համար:**

Կանգնեք. Մտածեք. Միացեք. տեղեկատվական արշավն առաջարկում է հետևյալ խորհրդատվությունը.

- ▶ **Կանգնեք** – Համացանցից օգտվելուց առաջ ժամանակ հատկացրեք՝ հասկանալու ռիսկերը և սովորեք, թե ինչպես բացահայտել հավանական խնդիրները:
- ▶ **Մտածեք** – Մի պահ հատկացրեք համոզվելու համար, որ ձեր առջև բացված ուղին հստակ է: Դիտարկեք նախազգուշական նշանները և մտածեք, թե ինչպես են ձեր առցանց գործողություններն ազդում ձեր և ձեր ընտանիքի անվտանգության վրա:
- ▶ **Միացեք** – Օգտվեք Համացանցից առավել մեծ վստահությամբ՝ իմանալով, որ դուք ձեռնարկել եք ճիշտ քայլերը ապահովելու ձեր և ձեր համակարգիչի անվտանգությունը:

**Կանգնեք. Մտածեք. Միացեք.** Պաշտպանեք ինքներդ ձեզ և օգնեք Համացանցը դարձնել ավելի լավ տեղ բոլորի համար:

Ավելի մանրամասն տեղեկությունների, ինչպես նաև տեղեկատվական արշավին մասնակցելու համար այցելեք մեր համացանցային կայքը հետևյալ հասցեով՝ [www.dhs.gov/stothinkconnect](http://www.dhs.gov/stothinkconnect).



# OnGuard Online



STOP | THINK | CONNECT™

Կանգնեք. Մտածեք. Միացեք.<sup>TM</sup> հանրային իրազեկման ազգային տեղեկատվական արշավ է, որի նպատակն է խորացնել կիրքեովտանգների մասին գիտելիքները և հզորացնել ամերիկացի հանրությանը՝ Համացանցը ավելի ապահով և անվտանգ օգտագործելու համար:

OnGuardOnline.gov-ը տրամադրում է գործնական խորհուրդներ դաշնային կառավարություն նից և տեխնոլոգիական համայնքից՝ համացանցային խարդախությունից պաշտպանվելու, ձեր համակարգիչները անվտանգ պահելու և անձնական կյանքի գաղտնիությունը պաշտպանելու համար:

Կանգնեք. Մտածեք. Միացեք. արշավի մասին առավել մանրամասն տեղեկություններ ստանալու համար այցելեք [www.dhs.gov/stopthinkconnect](http://www.dhs.gov/stopthinkconnect):